ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՈՎ

Արտադրահեղանակի երկու կողմերը հանդիսացող արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների վերաբերյալ կես դարից ավելի է, ինչ բանավեճեր են մղվում։ Ընդ որում, բանավիճողներն ընդունում են, որ արտադրողական ուժերն արտադրահեղանակի առավել դինամիկ կողմն են։ Արտադրողական ուժերի զարգացման յուրաքանչյուր աստիճանին համապատասխանում են որոշակի արտադրական հարաբերություններ, որոնք հանդես են գալիս որպես դրանց զարգացման սոցիալ-տնտեսական ձև։ Այս երկու կողմերը սերտորեն կապված են և կազմում են դիալեկտիկական միասնություն։ Այստեղ, ինչպես նշվում էր դեռ վերակառուցման շրջանում տեղի ունեցող բանավեճերում, կատարվում է ձևի և բովանդակության իսկական փոխներթափանցում[1]։ Դրանք դժվար է իրարից անջատել։ Եվ միայն իմացության նպատակով մենք կարող ենք դրանք առանձին դիտարկել[2]։ Ներկայիս տնտեսագիտական, փիլիսոփայական և սոցիոլոգիական գրականության մեջ հետազոտողներն արտադրողական ուժեր կատեգորիան դիտարկում են իբրև միասնական համակարգ, որի տարրերը որոշակի փոխհարաբերության մեջ են։ Սակայն արտադրողական ուժերի կառուցվածքի վերաբերյալ միասնական տեսակետ չկա։ Տարաձայնությունները հիմնականում վերաբերում են այն հարցին, թե այս կամ այն տարրերը մտցվո՞ւմ են արդյոք արտադրողական ուժերի կազմի մեջ, թե ոչ։ Մեր կարծիքով, այդպիսի տարաձայնություններ կարող էին և չլինել, եթե որոշ հեղինակներ չմոռանային մարքսիստական այն դրույթը, ըստ որի իրային և հոգևոր բոլոր տարրերի զարգացումը հանդես է գալիս որպես մարդու արտադրողական ուժերի զարգացման ձևերից մեկը[3]։

Արտադրողական ուժերի զարգացումը, դրանց պատմությունը մշտապես գտնվել են մարքսիզմ-լենինիզմի դասականների ուշադրության կենտրոնում։ Կ. Մարքսը գրել է. «Դարվինը հետաքրքրություն ուղղեց բնական տեխնոլոգիայի պատմության կողմը, այսինքն՝ բուսական և կենդանական օրգանների գոյացման կողմը, որոնք բույսերի և կենդանիների կյանքում արտադրության գործիքների դեր են խաղում։ Արդյո՞ք նույնպիսի ուշադրության արժանի չէ՞ հասարակական մարդու արտադրողական օրգանների գոյության պատմությունը, ամեն մի առանձին հասարակական կազմակերպության այդ նյութական պատվանդանի պատմությունը»[4]։ Այս առումով արտադրողական ուժերի էության և կառուցվածքի ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է նրա բոլոր տարրերը, դրանց զարգացումը դիտարկել որպես «հասարակական մարդու արտադրողական օրգանների» զարգացում։ Չէ որ արտադրողական ուժերի համակարգի այս բոլոր տարրերը մարդու «արտադրողական հնարավորությունների» զարգացման և իրացման արդյունք են։ Հենց նա է տվյալ համակարգի հիմնական և շարժիչ մոմենտը և հենց նրա գործունեությունն է

---

1 «Вестник Коммунистической Академии», кн. 39, М., 1930, с. 133.

2 Б. А. Чагин, А. Г. Харчев, О категориях «производительные силы» и «производственные отношения» («Вопросы философии», 1958, № 2, с. 9).

3 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 33.

4 *Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 391։*

արտադրողական ուժ կատեգորիայի ելակետը[5]։ «Հասարակական մարդու արտադրողական օրգանների» ծագումը և զարգացումն անհնար է պատկերացնել մարդու և բնության փոխհարաբերության պրոցեսից դուրս։ Հենց այս պրոցեսում, որի հիմքում ընկած է մարդու աշխատանքային գործունեությունը, կարգավորվում է այդ «արտադրողական օրգանների զարգացումը» և մարդու կողմից նոր արտադրողական ուժերի «ձեռքբերումը»։ Այսինքն, ի տարբերություն բնության կողմից «ստեղծված» կենդանիների և բույսերի արտադրության գործիքների, մարդն աշխատանքի պրոցեսում ինքն է ստեղծում իր «արտադրողական օրգանները»՝ սեփական աշխատուժի և բնության կողմից տրված նյութերի միջոցով։ Եվ սկսած այն պահից, երբ մարդը սկսում է պատրաստել, ստեղծել դրանք, այսինքն՝ երբ մարդն արդեն սկսում է բնության (աշխատանքի) առարկայի վրա ներգործել ոչ թե իր մարմնի մասերով, այլ աշխատանքի գործիքներով, միայն այդ ժամանակ կարելի է խոսել հասարակության նյութական հիմքի ձևավորման մասին։ Մարդկանց գործունեության, գործնական եռանդի[6] արդյունք հանդիսացող արտադրողական ուժերի զարգացման նկատմամբ մարքսիզմ-լենինիզմի դասականների ցուցաբերած նման հատուկ ուշադրությունը պատահական չէ։ Չէ որ հենց արտադրողական ուժերի զարգացումն է, որ հանդես է գալիս որպես հասարակական առաջընթացի բարձրագույն չափանիշը[7] և հենց այդ զարգացումն է «իրական հարստության ավելացման»[8] միակ միջոցը։ Արտադրողական ուժերի զարգացման պրոբլեմները միշտ գտնվել են մեր կուսակցության և կառավարության ուշադրության կենտրոնում։ ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1983 թ.) պլենումում նորից հատուկ սրությամբ բարձրացվեցին արտադրողական ուժերի հետագա զարգացման անհրաժեշտության, հասարակական արտադրության արտադրողականության և արդյունավետության բարձրացման հարցերը[9]։

Արտադրողական ուժերի կառուցվածքի, էության և զարգացման խնդիրների գնահատման հարցում, ինչպես նշվեց, հետազոտողների միջև եղած տարաձայնությունները հիմնականում վերաբերում են այս կամ այն տարրերն արտադրողական ուժերի համակարգում ընդգրկելու կամ չընդգրկելու հարցին։ Օրինակ, Վ. Մարախովը գտնում է, որ «աշխատանքի առարկան դիմադրություն է ցուցաբերում աշխատանքի գործիքի հետ փոխազդեցության պրոցեսի ընթացքում» և որ «դիմադրության ուժն արտադրողական ուժ չէ»[10]։ Յու. Պլետնիկովը գտնում է, որ արտադրողական ուժերի սուբստանցիոնալ տարրերը միայն մարդը և աշխատանքի միջոցներն են, և «եթե աշխատանքի առարկան ընդգրկենք արտադրողական ուժերի մեջ, ապա արտադրությունը կդադարի մարդու և բնության միջև տեղի ունեցող պրոցես լինելուց, հետևաբար հասարակությունը կկորցնի բաց համակարգի կարգավիճակը»[11]։ Մյուս հեղինակները տվյալ հարցը լուծում են յուրատեսակ կոմպրոմիսի ճանապարհով, այսինքն՝ արտադրողական ուժերի կազմում ընդգրկում են այն աշխատանքի առարկաները, որոնք արդեն, որպես կանոն, նախապես անցել են մարդկային գործունեության հնոցով և ներծծված են մարդկային աշխա-

---

5 «Вестник Коммунистической Академии», кн. 39, М., 1930, с. 102, 129.

6 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 709։

7 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 16, էջ 268։

8 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 26, ч. III, с. 267.

9 «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը (14—15 հունիսի, 1983 թ.)», Երևան, 1983, էջ 10—11։

10 В. Г. Марахов, Структура и развитие производительных сил социалистического общества, М., 1970, с. 52.

11 Ю. К. Плетников, О природе социальной формы движения, М., 1971, с. 34; его же, Отношения предмета труда и производительных сил. Проблема источников развития производительных сил («Вопросы фулософии», 1981, № 4, с. 102).

տանքով[12]։ Տվյալ հարցի կապակցությամբ վերջնական որոշակի եզրակացությունից առաջ հարկ է հիշել Կ. Մարքսի հետևյալ խոսքերը. «Այն բոլոր առարկաները, որ աշխատանքը պետք է միայն պոկի հողի հետ ունեցած նրանց անմիջական կապից, բնությունից տրված աշխատանքի առարկաներ են»[13]։ Բացի այդ, նա նկատել է, որ «որոշ սպառողական արժեք հում նյութ է արդյոք, աշխատամիջոց է թե արդյունք, այդ ամբողջովին կախված է աշխատանքի պրոցեսում նրա կատարած որոշ ֆունկցիայից, այն տեղից, որ նա գրավում է այդ պրոցեսում, և այդ տեղի փոփոխվելով՝ փոխվում են նաև նրա սահմանումները»[14]։ Կ. Մարքսի ասույթներից հետևում է, որ և՛ աշխատանքի միջոցները, և՛ աշխատանքի առարկաները ոչ այլ ինչ են, եթե ոչ բնությունից տրված նյութեր (այսինքն միատեսակ ծագում ունեն) և տարբերվում են միայն աշխատանքի պրոցեսում կատարած ֆունկցիայով, ընդ որում տարբերությունը շատ հարաբերական է։ Բնության միևնույն նյութը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում կարող է զանազան ֆունկցիաներ կատարել, այսինքն՝ այն կարող է որոշ ճյուղերում աշխատանքի առարկայի, իսկ մյուսներում՝ աշխատանքի գործիքի ֆունկցիա կատարել։ Եվ եթե արտադրողական ուժերի էությունը մարդու և բնության փոխհարաբերության պրոցեսն է, որի հիմքում ընկած է աշխատանքը, ապա իրավունք ունե՞նք արդյոք աշխատանքի այս պրոցեսից դուրս մղել նրա պարզ և անհրաժեշտ գործոններից մեկը։ Իհարկե, ոչ։ Այդ պատճառով մենք համամիտ ենք այն հեղինակներին, որոնք դեռևս 1950-ական թվականների վերջերին տեղի ունեցած բանավեճերում աշխատանքի առարկան ընդգրկում էին արտադրողական ուժերի կազմում[15]։

Արտադրողական ուժերի համակարգում որոշիչ դերը պատկանում է աշխատանքի գործիքներին։ Բնության վրա իր ներգործությունն ուժեղացնելու նպատակով մարդու ստեղծած առաջին առարկան աշխատանքի պարզագույն գործիքն էր։ Եվ եթե մարդկության զարգացման պատմությունը ներկայացնենք որպես մարդու և բնության փոխներգործություն, նրա կողմից բնության ուժերի նվաճման պատմություն, ապա կտեսնենք, որ այն միաժամանակ աշխատանքի գործիքների մշտական, անընդհատ բազմապատկման և կատարելագործման պատմություն է։ Առանց դրանց զարգացման և կատարելագործման անհնար է պատկերացնել որևէ հասարակական-տնտեսական ֆորմացիայի նյութական հիմքի զարգացումը։ Դրանք արտադրողական ուժերի նյութական տարրերի մեջ ամենադինամիկ և ամենաակտիվ տարրերն են։ Սակայն աշխատանքի միջոցների ակտիվ ներգործությունն աշխատանքի առարկայի վրա (այն նյութական բարիքի վերափոխելու նպատակով) ամենևին էլ չի խոսում այն մասին, որ աշխատանքի առարկան պասիվ տարր է միայն։ Իհարկե, ակտիվության և արտադրողական ուժերի ներգործության աստիճանները շատ են տարբերվում։ Սակայն աշխատանքի առարկան իր ֆիզիկական, քիմիական և այլ հատկություններով ազդում է մեքենաների ու մեխանիզմների կառուցվածքի, արտադրական պրոցեսների տեխնոլոգիայի և կազմակերպման վրա ու դրանց մեջ առաջ է բերում համապատասխան բարեփոխումներ։

Խոսելով արտադրողական ուժերի իրային տարրերի, դրանց փոփոխության և փոխազդեցության մասին, երբեք չպետք է մոռանալ, որ իրային տարրերն ինքնին չեն կարող փոփոխվել և փոխներգործվել, քանի որ «աշխատանքի

---

12 Е. Х. Капелян, Производительные силы: структура, функция, типология, Минск, 1976, с. 31, 42.

13 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 189։

14 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 194։

15 В. Н. Черковец, К вопросу о марксистском понятии производительных сил («Вестник Московского университета», 1958, №2, с. 18); Б. А. Чагин, А. Г. Харчев, նշվ. աշխ., էջ 10։

միջոցների և առարկաների փոխազդեցությունն անբաժանելի է արտադրողական ուժերի անձնական և իրային տարրերի փոխազդեցությունից»[16]։ Եվ արտադրողական ուժերի տվյալ համակարգի բոլոր կապերն անհնար է վերլուծել, եթե մարդը՝ սոցիալական բոլոր պրոցեսների այդ միակ գործուն սկիզբը, չդիտվի որպես անկյունաքար[17], քանի որ «հենց ինքը՝ մարդն է արտադրողական ուժերի ինքնափոփոխող, ինքնազարգացնող մասը»[18]։ Հենց նրա գործունեության շնորհիվ է տեղի ունենում արտադրողական ուժերի բոլոր տարրերի փոփոխությունը։ Եվ այժմ, թերևս, դժվար է գտնել հետազոտողի, որը վիճարկեր այն փաստը, թե հենց մարդն է արտադրողական ուժերի համակարգի զարգացման գործուն և ստեղծագործական սկիզբը։

Արտադրության միջոցների զարգացման մակարդակը և կատարելության աստիճանը կախված է մարդու զարգացման մակարդակից, նրա ունակություններից, և, առաջին հերթին, հոգևոր։ Մարդու ստեղծած աշխատանքի բոլոր գործիքների մեջ մենք տեսնում ենք նրա բանականության դրսևորումը, նրա ստեղծագործական մտահղացումների մարմնավորումը, այսինքն՝ դրանց մեջ առարկայացած նրա գիտելիքները բնության օրենքների և երևույթների մասին։ Եվ ամենևին էլ զարմանալի չէ, որ մի շարք հեղինակներ արտադրողական ուժերի համակարգում մարդու ամենագլխավոր դերը կապում են նրա մտածողության հետ[19]։ Իրոք, ինչպիսի գործունեությամբ էլ զբաղված լինի մարդը, նրա յուրաքանչյուր գործողությանը նախորդում է միտքը, քանի որ «աշխատանքի պրոցեսի վերջում ստացվում է այն հետևանքը, որն արդեն կար աշխատողի պատկերացման մեջ այդ պրոցեսն սկսվելիս, այսինքն իդեալապես»[20]։ Այսինքն՝ արդեն սկզբում մարդու նպատակամղված գործունեությունը ենթադրում է նրանից ստացվելիք արդյունքի «իդեալական կերպարի» ստեղծումը, իսկ այդ ստեղծված «իդեալական կերպարը» նրա մտածողության արգասիքն է, և հոգևոր էական ուժերի զարգացման արդյունքը։ Այդ ուժերի զարգացումը, իր հերթին, մարդու կողմից բնության օրենքների և երևույթների ճանաչողության արդյունքն է։ Առանց այդ պրոցեսի ճանաչողության մարդը չէր կարող տիրել բնության ուժերին և դրանք ծառայեցնել իրեն։ Իհարկե, մարդու և հասարակության արտադրողական ուժերի զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց այն ժառանգության, որը նա ստանում է նախորդ սերունդներից։ Հենվելով նախորդ սերնդի ձեռք բերած փորձի և արտադրողական ուժերի մակարդակի վրա, որոնք «ծառայում են իբրև հում նյութ նոր արտադրության համար»[21], ամեն մի հաջորդ մարդկային սերունդ ստեղծում է ավելի կատարյալ արտադրողական ուժեր՝ դրանով իսկ բազմապատկելով հասարակության արտադրողական ուժերը և մեծացնելով իր իշխանությունը բնության ուժերի նկատմամբ։ Բայց, եթե մարդիկ իրենց գործունեության մեջ հենվեին միայն նախորդ սերնդի ձեռք բերած փորձի ու արտադրողական ուժերի մակարդակի վրա և մեքենաների բանող մասերը ստեղծեին միայն ձեռքի օպերացիաների նմանությամբ, որը կատարվում էր գործիքների միջոցով[22], այսինքն եթե չլիներ արտադրողական ուժերի սուբյեկտիվ գործոնի, հոգևոր կողմի զարգացման հարաբերական ինքնուրույնությունը, ապա չէին լինի նաև տեխնիկայի այն հրաշքները, որոնց մենք ականատես ենք այսօր։ Չէ՞ որ «մարդու գիտակցությունը ոչ միայն արտացոլում է օբյեկտիվ աշխար-

---

16 Ю. К. Плетников, О природе социальной формы движения, с. 233.

17 Նույն տեղում, էջ 31։

18 Н. В. Марков, Закономерности развития производительных сил в период строительства коммунизма, М., 1969, с. 87.

19 В. Г. Марахов, նշվ. աշխ., էջ 20—21։

20 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 189։

21 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 709։

22 Н. В. Марков, նշվ. աշխ., էջ 32։

հը, այլև կերտում է այն»[23]։ Եվ հատկապես իմացության աստիճանն է որոշում, թե որքան է մարդն առաջադիմել իր պրակտիկ գործունեության ընթացքում և ինչպիսին է նրա արտադրողական ուժերի զարգացման մակարդակը։ Միայն բնությունը, նրա օրենքներն ու երևույթները ճանաչելով մարդը կարող է օգտագործել «իրերի մի մասը, բնության ուժերը և իր բանվորական ուժը բնական օբյեկտների մյուս մասի դեմ»[24], դրանք անհրաժեշտ կենսական բարիքներ դարձնելու նպատակով։

Բնության օրենքների և երևույթների ճանաչման պրոցեսն անվերջանալի և բարդ պրոցես է։ Դա բավական պարզ օրենքներից և երևույթներից դեպի առավել բարդն ընթացող ճանաչողության պրոցես է։ Արտադրողական ուժերի զարգացման բնագավառում ցանկացած հեղափոխություն, լինի դա արդյունաբերական, թե գիտատեխնիկական, կարող էր տեղի ունենալ կուտակված մարդկային գիտելիքի հիման վրա։ Դեռ մինչև արդյունաբերական հեղաշրջման սկիզբը մարդիկ արդեն ունեին մեխանիկայի օրենքների պատշաճ գիտելիքներ և ամեն ինչ չէ, որ ձեռքով էին անում։ Նրանք արդեն կիրառում էին բավական բարդ գործիքներ, օրինակ, հաստոցներ, լծակներ և այլն[25]։ Բնության օրենքների և երևույթների ճանաչողության զարգացումը մարդու կողմից հանդես է գալիս գիտության զարգացման ձևով, քանի որ ինքը՝ գիտությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու գիտելիքը՝ վերածված համակարգի[26]։ Երբ Կ. Մարքսը գրում էր գիտության զարգացման՝ որպես մարդու արտադրողական ուժերի զարգացման որևէ ձևի մասին, ապա նա նկատի ուներ նրա հոգևոր արտադրողական ուժերի զարգացումը, քանի որ «ոչ մի դեպքում չի կարելի գիտակցությունն անջատել մատերիալից, որը մտածում է»[27]։

Մարդու և բնության փոխազդեցության, նրա ուժերի նվաճման, զարգացման պրոցեսում առավել մեծ չափով է անհրաժեշտ դառնում բնության այս կամ այն օրենքների և երևույթների ճանաչողության արդյունքների կիրառումը։ Այսինքն՝ այդ պրոցեսում մարդու ֆիզիկական ընդունակություններին զուգահեռ ոչ պակաս դեր են սկսում խաղալ նաև նրա հոգևոր ունակությունները։ Արտադրողական ուժերի գլխավոր տարրի այդ հոգևոր կողմի զարգացումը, ինչպես նշեցինք, դրսևորվում է գիտության զարգացման ձևով, հանդես գալով «հարստության ավելի հիմնական ձևով, հանդիսանալով հարստության ինչպես արդյունքը, այնպես էլ ստեղծողը»[28]։ Հասարակական արտադրությունում գիտության տեղի և դերի մասին առկա են մի շարք տեսակետներ։ Ճիշտ է այն տեսակետը, համաձայն որի գիտությունն ի սկզբանե ունեցել է արտադրողական նշանակություն, և հոգևոր գործոնը դեռևս հնադարյան արտադրական համակարգերում մեծ ներգործություն է ունեցել աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա[29]։ Հարցը միայն այն է, թե ինչպիսին է եղել գիտության կապն արտադրության հետ, այսինքն՝ այն, թե ինչ աստիճանով է գիտությունը կիրառվել արտադրության մեջ։

Հոգևոր արտադրությունը, որպես մարդկանց գործունեության հատուկ տեսակ, ծագելով աշխատանքի «իսկական բաժանման»[30] հետ միասին, միշտ այս կամ այն չափով գաղափարներով սնել է նյութական բարիքների արտադրությունը։ Մարդու կողմից առաջին պարզագույն աշխատանքի գործիքների, տարբեր տեսակի հարմարանքների պատրաստումը և կիրառումը եղել է մեխանիկայի պարզ օրենքների ճանաչողության արդյունք։ Եվ մարդու ստեղծած

---

23 Վ. Ի. Լենին, նշվ., հ. 29, էջ 236։

24 Н. В. Марков, նշվ. աշխ., էջ 86—87։

25 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 712։

26 Г. В. Плеханов, Избранные произведения, т. 3, М., 1957, с. 32.

27 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 2, с. 143.

28 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 33.

29 Ю. А. Васильчук, Диалектика производительных сил («Вопросы философии», 1971, № 9, с. 45); Е. Х. Капелян, նշվ. աշխ., էջ 57։

30 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 30։

այդ առաջին ոչ կատարյալ արհեստական արտադրողական ուժերը մեզ հուշում են դրանց մեջ հոգևոր սկզբի ոչ մեծ բաժնի մասին, այսինքն՝ այն մասին, որ դրանց անկատարելիությունն ուղղակի կախվածության մեջ է մարդու հոգևոր ուժերի զարգացման մակարդակից և ճանաչողության աստիճանից։ Մարդու և բնության փոխհարաբերության հետագա զարգացումը հանգեցրել է բնության ավելի բարդ երևույթների, օրենքների և պրոցեսների ճանաչողությանը։ Եվ գիտության իրական ներդրումը արտադրության մեջ, ի տարբերություն պատահականի և մասնավորի, տեղի է ունենում հենց այն ժամանակ, երբ «որպես միջանկյալ օղակ բանվորն իր և անօրգանական բնության միջև, որին նա տիրապետում է, տեղադրում է իր կողմից արդյունաբերականի փոխարինվող բնական պրոցեսը»[31]։ Եվ սկսած այն պահից, երբ մարդը ճանաչում է բնական բարդ պրոցեսները և դրանք «տեղադրում» իր և աշխատանքի առարկաների միջև, սկսում է հասարակության արտադրողական ուժերի զարգացման նոր փուլը։ Այսինքն՝ հենց ճանաչողության պրոցեսի շնորհիվ է տեղի ունենում հասարակության արտադրողական ուժերի բազմապատկումը և դրանց բուռն զարգացումը։ Բնական պրոցեսների, օրենքների և երևույթների ճանաչողության զարգացումը, այլ խոսքով՝ մարդու հոգևոր ուժերի զարգացումն ամբողջությամբ դառնում է հասարակության առաջընթացի և արտադրողական ուժերի զարգացման և կատարելագործման անհրաժեշտ պայմանը։ Մարդկային հասարակության հետագա զարգացումն անհնար է դառնում՝ արտադրության մեջ առանց գիտության ավելի լայն կիրառման և ընդհանրապես վերջինիս զարգացման։ Գիտության դերը հասարակության զարգացման յուրաքանչյուր հաջորդ փուլում դառնում է է՛լ ավելի որոշիչ, և, բնական է, նույնպիսին է դառնում մարդու զարգացումը, քանի որ մարդը, նրա զարգացումը «առաջնություն ունի ոչ միայն նյութական տարրերի, այլ նաև գիտության հանդեպ»[32]։ Այդ պատճառով էլ արտադրողական ուժերի զարգացման մեջ ամեն մի հեղափոխական փուլ մարդու հոգևոր արտադրողական ուժերի հեղափոխության արդյունք է, որը դրանց կառուցվածքում հանգեցնում է արմատական փոփոխություններ։ Արտադրողական ուժերի համակարգում մարդն է «այն կենտրոնը, որտեղ զուգակցվում և միահյուսվում են բոլոր կապերն ու հարաբերությունները, միայն նա է այն սուբյեկտը, որը դրա գործունեության շարժող և ուղղություն տվող ուժն է»[33]։

Այսպիսով, եթե արտադրողական ուժերը որպես համակարգ կարող են փոփոխվել, զարգանալ և գործել միայն իր գլխավոր տարրի՝ մարդու շնորհիվ, որն «այն կենտրոնն է», որտեղ միահյուսվում և զուգակցվում են բոլոր կապերը և հարաբերությունները, ապա դրանից կարելի է եզրակացնել, որ հենց մարդն է արտադրողական ուժերի համակարգին տալիս նրա հիմնական ինտեգրատիվ որակը և նա է որոշում համակարգի բովանդակությունը որպես արտադրողական։ Եթե հետևենք համակարգային մոտեցման սկզբունքներին, ապա պարտադիր չէ, որպեսզի տվյալ համակարգի բոլոր տարրերն օժտված լինեն այն որակով և հատկությամբ, որով օժտված է ամբողջ համակարգը։ Բացի այդ, ինչպես իրավամբ նկատում է Վ. Սադովսկին, «օբյեկտի հատկությունը, որպես ամբողջի, որոշվում է ոչ միայն և ոչ այնքան նրա առանձին տարրերի, որքան նրա կառուցվածքի հատկություններով, դիտվող օբյեկտի հատուկ ինտեգրատիվ կապերով»[34]։ Հետևաբար, հնարավոր է՝ և այնպիսի տարբերակ, երբ տարրերից ոչ մեկն առանձին վերցրած չունի այն որակը կամ հատկությունը, որն ունի ամբողջ համակարգը։ Վ. Բարուլինն արտադրողական ուժերի կառուցվածքի և էության հետազոտման ժամանակ օգտագործելով նույն համակարգային մոտեցումը, գրում է. «Եթե արտադրողական ուժերը համակարգ են, ապա նրանց յուրաքանչյուր տարրը այդ նույն համա-

31 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 213.

32 Е. Х. Капелян, նշվ. աշխ., էջ 95։

33 «Научное управление обществом», вып. 8, М., 1974, с. 19.

34 В. Н. Садовский, Основания общей теории систем, М., 1974, с. 18.

կարգի տարր է հանդիսանում միայն տվյալ համակարգի շրջանակներում։ Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր տարրի արտադրողական ուժ լինելու հատկությունը համակարգային հատկությունն է։ Այն ոչ թե ի սկզբանե այդ տարրին հատուկ է առանձնության և ինքնուրույնության մեջ, այլ հանդես է գալիս, բացահայտվում է միայն որոշակի համակարգի շրջանակներում»[35]։ Մենք գտնում ենք, որ այդ միտքը ճիշտ է համակարգի բոլոր տարրերի նկատմամբ, բացառությամբ նրա գլխավոր տարրի՝ մարդու, որը համակարգի միակ ստեղծող, գործունյա սկիզբն է և միակ «ինքնազարգացող և ինքնափոփոխվող» տարրը։ Բացի այդ, արտադրողական ուժ լինելու այդ հատկությունը մարդուն ներհատուկ է ի սկզբանե, քանի որ նրա աշխատուժը, որի շնորհիվ նա արտադրում է, հանդես է գալիս որպես բնության ուժերից մեկի դրսևորում, տրված է հենց բնության կողմից[36]։ Իսկ մնացած տարրերն արտադրողական ուժ լինելու հատկությունը և ֆունկցիան իրապես ստանում են համակարգում և ստանում են հենց մարդու կողմից, որի զարգացումը, չնայած համակարգի բոլոր տարրերի փոխազդեցության համակողմանիությանը, հանդես է գալիս որպես արտադրողական ուժերի զարգացման ելակետ[37]։ Ահա թե ինչու Գ. Բագատուրիան, ելնելով նրանից, որ հենց աշխատուժն է աշխատանքի պրոցեսի և արտադրության շարժման միակ ակտիվ աղբյուրը և պատճառը, գտնում է, որ «աշխատուժը բառի բուն և ամենանեղ իմաստով հանդիսանում է միակ արտադրողական ուժը», իսկ «աշխատանքի իրացման բոլոր իրային, օբյեկտիվ, բնական և հասարակական պայմաններն այդպիսի դեպքում հանդես են գալիս որպես աշխատանքի նյութական (իրային) պայմաններ, որպես արտադրության պայմաններ»[38]։ Այսինքն այն ուժը, որն, իրոք, արտադրում և վերափոխում է բնությունը, մարդն է, նրա աշխատուժը, իսկ արտադրողական ուժերի մնացած տարրերը հանդես են գալիս որպես արտադրողական ունակությունների իրացման պայմաններ։ Մարդու աշխատուժի իրացման ընթացքում այդ բոլոր «առարկայական» օբյեկտիվ, բնական պայմանները ստանում են արտադրողական ուժի հատկություն, ֆունկցիա, դառնում են արտադրողական համակարգի իսկական տարրեր։ Հենց անձնական տարրն է, որ այս կամ այն առարկաներին արտադրողական ուժի ֆունկցիա է հաղորդում, և հենց ինքն է տիրապետում բնության ուժերին (քամու, ջրի, արևի էներգիայի և այլն) ծառայեցնում իրեն՝ բազմապատկելով հասարակության արտադրողական ուժերը։ Այսինքն՝ արտադրողական ուժերի ֆոնդի ընդլայնումը և նորերի «ձեռքբերումը» կարող են տեղի ունենալ անձնական տարրի զարգացմամբ[39], նրա կողմից բնության օրենքների և երևույթների բազմազանության իմացության շնորհիվ։

Այսպիսով, հասարակական արտադրողական ուժերի զարգացումը, նրանց կառուցվածքում կատարվող որակական տեղաշարժերն առաջին հերթին կախված են այն բանից, թե մարդը, որը տվյալ արտադրողական համակարգի բովանդակության որոշողն է, որքանով է կարողանում օգտագործել իր արտադրողական ու ստեղծագործական հնարավորությունները։ Միայն մարդու ստեղծագործական (բարձր արտադրողականություն ունեցող մեքենաների և սարքավորումների, որակապես նոր և առաջավոր աշխատանքի առարկաների ստեղծում, արդյունավետ անթափոն տեխնոլոգիական պրոցեսների մշակում և այլն) և արտադրողական հնարավորությունների լրիվ իրացման (հումքի և նյութի խնայողական և համալիր արդյունավետ օգտագործում, արտադրա-

---

35 В. С. Барулин, Производительные силы как категория исторического материализма («Вопросы философии», 1981, № 4, с. 231).

36 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1978, էջ 9։

37 Ю. К. Плетников, О природе социальной формы движения, с. 231.

38 Г. А. Багатурия, Категория «производительные силы» в теоретическом наследии Маркса и Энгельса («Вопросы философии», 1981, № 9, с. 106).

39 И. Н. Сиземская, Вещественное и социальное содержание производительных сил («Вопросы философии», 1981, № 4, с. 105).

կան կարողությունների ժամկետից շուտ ներդրում ու ամբողջական օգտագործում և այլն) շնորհիվ է հնարավոր ապահովել հասարակական արտադրության արդյունավետ զարգացումը։

Արտադրության սոցիալիստական եղանակը ստեղծում է անհրաժեշտ բոլոր օբյեկտիվ պայմաններն ու հնարավորությունները՝ արտադրողական ուժերի ըստ ամենայնի զարգացման և տնտեսության արդյունավետ գործունեության համար։ Սակայն այդ պայմանների և հնարավորությունների առկայությունը դեռևս ինքնաբերաբար չի հանգեցնում դրանց իրացմանը։ Սա սուբյեկտիվ գործոնի ոլորտ է։ Մարդն այն ուժն է, որը «հնարավորը գարձնում է իրականություն»[40]։ Այստեղ հիմնական խնդիրն այն է, որպեսզի սուբյեկտիվ գործոնն ուղղվի բոլոր օբյեկտիվ պայմանների և հնարավորությունների լրիվ օգտագործմանը, հակառակ դեպքում դրանք կմնան իբրև հնարավորություն։ Այդ է պատճառը, որ հասարակության արտադրողական ուժերի հետագա զարգացման, նրանց կառուցվածքի և արդյունավետ գործունեության որակական փոփոխության պրոբլեմների լուծումն անհնար է առանց արտադրողական ուժերի համակարգի ամենագլխավոր տարրի՝ մարդու, ակտիվացման պրոբլեմի լուծման։ Կոմունիստական հասարակության նյութական բազայի ստեղծումը, նրա հետագա զարգացումն անհնար է պատկերացնել առանց անձնական տարրերի առավելագույն ակտիվացման, նրա ստեղծագործական ու արտադրողական ունակությունների լրիվ իրացման։

О СТРУКТУРЕ ПРОИЗВОДИТЕЛЬНЫХ СИЛ

ЭДУАРД АГАДЖАНОВ

Резюме

Уровень развития производительных сил общества в первую очередь зависит от степени развития его главного элемента—человека. Именно он придает системе производительных сил его основное интегративное качество, и именно человек определяет содержание данной системы как производительной. Остальные элементы это качество и функцию производительной силы получают в системе и получают их именно от человека, развитие которого, несмотря на универсальность взаимодействия всех элементов системы, выступает первичным моментом развития производительных сил. Человеку же это свойство (быть производительной силой) присуще изначально, ибо его рабочая сила, благодаря которой он производит, выступает как проявление одной из сил природы, дана самой природой (К. Маркс). И любое развитие, расширение фонда производительных сил и «приобретение» новых может происходить за счет развития его личностного элемента.

---

[40] В. И. Приписков, Проблема субъективного фактора в историческом материализме, Душанбе, 1966, с. 69.